

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

5 դեկտեմբերի 2013 թ.

N 1354-Ն

**Հ Ր Ա Մ Ա Ն**

**«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ», «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՏՆՕՐԵՆ» ԵՎ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՍՏԻԱՐԱԿ» ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 10-րդ կետի «իզ» ենթակետի պահանջը՝

**Հրամայում եմ՝**

1. Հաստատել՝

- 1) «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի կարգը՝ համաձայն Հավելված 1-ի,
- 2) «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթի կարգը՝ համաձայն Հավելված 2-ի,
- 3) «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի կարգը՝ համաձայն Հավելված 3-ի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ա. Աշոտյան**

**Հավելված 1**

**ՀՀ կրթության և գիտության նախարարի  
2013 թ. դեկտեմբերի 5-ի  
N 1354-Ն հրամանի**

**«Տարվա լավագույն ուսուցիչ»  
մրցույթի կարգ**

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպման և անցկացման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Մրցույթի նպատակն է բացահայտել առարկայական խորը պատրաստվածություն ցուցաբերած, ստեղծագործական աշխատանք կատարող ուսուցիչներին, տարածել նրանց մանկավարժական և մասնագիտական առաջավոր փորձը, նպաստել հասարակության մեջ ուսուցիչ-մանկավարժի հեղինակության բարձրացմանը:

3. Մրցույթը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

4. Մրցույթն անցկացվում է 3 փուլով՝

- 1) 1-ին՝ ներդպրոցական,
- 2) 2-րդ՝ մարզային (Երևանի քաղաքային),
- 3) 3-րդ՝ հանրապետական:

5. Մրցույթի 1-ին փուլն անցկացվում է ուսումնական հաստատություններում՝ սեպտեմբերից մարտ ընկած ժամանակահատվածում:

6. Մրցույթի 1-ին փուլի անցկացման նպատակով հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում (առնվազն 5 անդամ) ընդգրկվում են տնօրենը, տնօրենի տեղակալը (տեղակալները), մեթոդիավորման անդամներ, ուսուցիչներ, ծնողներ:

7. Մասնակիցների թեկնածությունները հանձնաժողովին ներկայացնում են ուսումնական հաստատությունների մեթոդական միավորումները:

8. Ուսումնական հաստատության լավագույն ուսուցիչն ընտրվում է այդ նպատակով հանձնաժողովի հրավիրած նիստում, հանձնաժողովի անդամների փակ քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

9. Ուսումնական հաստատությունում լավագույնը ճանաչված ուսուցիչը խրախուսվում է հաստատության տնօրինության կողմից և իրավունք է ստանում մասնակցելու Մրցույթի 2-րդ փուլին:

10. Մրցույթի 2-րդ փուլը սկսվում է ապրիլի 1-ին, արդյունքներն ամփոփվում են մինչև մայիսի 20-ը:

11. Մրցույթի 2-րդ փուլն անցկացնում են ՀՀ մարզպետների և Երևանի քաղաքապետի կողմից ստեղծված գնահատող հանձնաժողովները (առնվազն 5 անդամ):

12. Մրցույթի 2-րդ փուլի գնահատող հանձնաժողովների կազմում ընդգրկվում են մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) ներկայացուցիչներ, ուսումնական հաստատությունների տնօրեններ, ուսուցիչներ: Մրցույթի 2-րդ փուլի հանձնաժողովների կազմում ընդգրկվում են նաև Նախարարության ներկայացուցիչներ:

13. Մրցույթի 2-րդ փուլի գնահատող հանձնաժողովի կազմը հաստատելու համար լիազոր մարմինը դիմում է Նախարարություն՝ թեկնածու ներկայացնելու համար:

14. ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության ուսումնական հաստատությունների, ոչ պետական դպրոցների համար մրցույթի 2-րդ փուլը կազմակերպում և անցկացնում է Նախարարությունը:

15. Մրցույթի 2-րդ փուլին մասնակցելու համար ուսումնական հաստատության տնօրենները՝ ըստ ենթակայության, գնահատող հանձնաժողովներին են ներկայացնում ուսումնական հաստատության գնահատող հանձնաժողովի որոշումը և երաշխավորագիր-բնութագիր՝ որը ներառում է տեղեկատվություն՝

1) ուսուցչի որակավորման, մանկավարժական գործունեության (աշխատանքային ստաժ),

2) ուսուցչի կողմից անցկացրած որևէ դասի նկարագրության (դասի տեսագրություն),

3) կոչումների կամ պարգևների (առկայության դեպքում, երբ է ստացել, ո՞ւմ կողմից),

4) տարակարգի (առկայության դեպքում),

5) «Հայկական կրթական միջավայր» կրթական պորտալում մասնագիտական թեմայով դաս վարելու (առկայության դեպքում),

6) հանրապետական մրցութային միջոցառումներին մասնակցության և արդյունքների,

7) հրատարակած հոդվածների (առկայության դեպքում) վերաբերյալ:

13. Մրցույթի 2-րդ փուլն ընդգրկում է.

1) ներկայացված ուսուցիչների մասնակցությամբ կլոր սեղան-հանդիպում (դասավանդման հիմնախնդիրների և հանրակրթության հարցերին վերաբերող ազատ քննարկումներ),

2) բաց դասերի կազմակերպում (դասարանն ու ուսումնական ծրագրով նախատեսված թեման ընտրում է մարզային գնահատող հանձնաժողովը),

3) ուսուցչի կողմից ընտրված թեմայով վարպետաց դասերի անցկացում (դպրոցն ընտրում է գնահատող հանձնաժողովը):

14. Մրցույթի 2-րդ փուլի լավագույն ուսուցիչն ընտրվում է այդ նպատակով հանձնաժողովի հրավիրած նիստում, հանձնաժողովի անդամների փակ քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

15. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի որոշումը՝ լիազոր մարմինը մրցույթի 2-րդ փուլի հաղթողի տվյալները մինչև տվյալ տարվա մայիսի 30-ը ներկայացնում է Նախարարություն՝ հանրապետական փուլին մասնակցելու համար:

16. Մրցույթի 3-րդ փուլի գնահատող հանձնաժողովի կազմը հաստատում է ՀՀ կրթության և գիտության նախարարը: Գնահատող հանձնաժողովում ընդգրկվում են Նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, կրթության ազգային ինստիտուտի ներկայացուցիչներ, կարող են ընդգրկվել գիտության և մշակույթի գործիչներ, հասարակական, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, նախորդ 3 տարիներին «Տարվա լավագույն ուսուցիչ» ճանաչվածները, մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) կրթության կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներ:

18. Մրցույթի հանրապետական փուլն անցկացվում է կլոր սեղան-բանավեճի շրջանակներում՝ գնահատող հանձնաժողովի կողմից առաջադրված թեմայի շուրջ:

19. «Տարվա լավագույն ուսուցիչ» ընտրվում է այդ նպատակով հրավիրած նիստում, փակ քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

20. Հանրապետական փուլի մասնակից մյուս ուսուցիչներից ընտրվում են հաղթողներ նաև հետևյալ անվանակարգերում.

1) «Նվիրում երեխաներին»

2) «Ավանդույթները և նորարարությունը մանկավարժության մեջ»

3) «Ազատությունը և ժողովրդավարական արժեքները կրթության մեջ»:

21. Մրցույթի հանրապետական փուլն ամփոփվում է մինչև սեպտեմբերի 25-ը:

22. «Տարվա լավագույն» ուսուցիչը պարգևատրվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից:

23. Մրցույթի հանրապետական փուլի մասնակից բոլոր ուսուցիչները պարգևատրվում են Նախարարության կողմից՝ «Ուսուցչի տոնի» նախօրեին:

24. Մրցույթի արդյունքում հաղթող «Տարվա լավագույն ուսուցիչը» ուսումնական տարվա ընթացքում հանրապետության տարբեր դպրոցներում անցկացնում է վարպետաց դասեր, մասնակցում Նախարարության կողմից կազմակերպվող խորհրդաժողովներին, մանկավարժական մամուլում հրապարակում հոդվածներ:

25. «Տարվա լավագույն ուսուցիչ» ճանաչված, մրցույթի անվանակարգերում հաղթող մանկավարժները կարող են կրկին մրցույթին մասնակցել 5 տարի անց:

**«Տարվա լավագույն տնօրեն»  
մրցույթի կարգ**

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպման և անցկացման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Մրցույթի նպատակն է բացահայտել ստեղծագործական աշխատանք կատարող, կառավարման ժամանակակից միջոցներին տիրապետող տնօրեններին, տարածել նրանց մանկավարժական և ղեկավարման առաջավոր փորձը, նպաստել հասարակության մեջ մանկավարժ-ղեկավարի հեղինակության բարձրացմանը:

3. Մրցույթը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

4. Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ մարզային (Երևանի քաղաքային) և հանրապետական:

5. Մրցույթն անցկացնելու համար ստեղծվում են գնահատող հանձնաժողովներ:

6. Մրցույթի 1-ին փուլը սկսվում է ապրիլի 1-ին, արդյունքներն ամփոփվում են մինչև մայիսի 20-ը:

7. Մրցույթի 1-ին փուլի գնահատող հանձնաժողովի կազմը (առնվազն 5 անդամ) հաստատում է լիազոր մարմնի ղեկավարը: Գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) մասնագետներ, ուսումնական հաստատությունների տնօրեններ, նաև՝ Նախարարության ներկայացուցիչ:

8. Մրցույթի 1-ին փուլի գնահատող հանձնաժողովի կազմը հաստատելու համար լիազոր մարմինը դիմում է Նախարարություն՝ առաջադրելու թեկնածու:

9. Լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանումը գնահատող հանձնաժողովին է ներկայացնում Մրցույթի 1-ին փուլի մասնակիցների երաշխավորագրերն ու փաթեթները, որտեղ նշվում են տվյալներ թեկնածու տնօրենի կրթության, մասնագիտական և կազմակերպչական կարողությունների, մանկավարժական աշխատանքի ստաժի, տարբեր կրթական ծրագրերին ուսումնական հաստատության մասնակցության, արտաքին գնահատման արդյունքների, դպրոցի սովորողների՝ հանրապետական և միջազգային օլիմպիադաներին մասնակցության (առկայության դեպքում) վերաբերյալ, ինչպես նաև դպրոցի կառավարմանը, կրթության ոլորտի բարեփոխումներին վերաբերող տվյալ թեկնածուի նկատառումները (2 համակարգչային էջի սահմաններում):

10. Մրցույթի 1-ին փուլի արդյունքում հաղթողն ընտրվում է այդ նպատակով հանձնաժողովի հրավիրած նիստում, փակ քվեարկությամբ՝ գնահատող հանձնաժողովի ձայների մեծամասնությամբ:

11. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի որոշումը՝ լիազոր մարմինը մրցույթի 1-ին փուլի հաղթողի տվյալները մինչև տվյալ տարվա մայիսի 30-ը ներկայացնում է Նախարարություն՝ հանրապետական փուլին մասնակցելու համար:

12. Մրցույթի 2-րդ փուլի գնահատող հանձնաժողովի կազմն առաջադրում է Նախարարության հանրակրթության վարչությունը, հաստատում է ՀՀ կրթության և

գիտության նախարարը: Գնահատող հանձնաժողովում ընդգրկվում են Նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, կրթության ազգային ինստիտուտի մասնագետներ, կարող են ընդգրկվել մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) ներկայացուցիչներ, գիտության և մշակույթի անվանի գործիչներ, հասարակական, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, նախորդ 3 տարիներին «Տարվա լավագույն տնօրեն» ճանաչվածները:

13. Մրցույթի հանրապետական փուլն անցկացվում է կլոր սեղան-բանավեճի շրջանակներում՝ գնահատող հանձնաժողովի կողմից առաջադրված թեմայի շուրջ:

14. «Տարվա լավագույն տնօրեն» ընտրվում է այդ նպատակով հրավիրված նիստում, փակ քվեարկությամբ՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

15. Հանրապետական փուլի մասնակից մյուս տնօրեններից ընտրվում են հաղթողներ նաև հետևյալ անվանակարգերում.

1) «Ուսումնադաստիարակչական աշխատանքները լավագույնս կազմակերպելու համար»

2) «Ռազմահայրենասիրական և աշխատանքային դաստիարակության լավագույն փորձի համար»

3) «Գեղագիտական դաստիարակության լավագույն փորձի համար»:

16. Մրցույթի հանրապետական փուլն ամփոփվում է մինչև սեպտեմբերի 25-ը:

17. «Տարվա լավագույն» տնօրենը պարգևատրվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից:

18. Մրցույթի հանրապետական փուլի մասնակից բոլոր տնօրենները պարգևատրվում են Նախարարության կողմից՝ «Ուսուցչի տոնի» նախօրեին:

19. «Տարվա լավագույն տնօրեն» ճանաչված, մրցույթի անվանակարգերում հաղթող մանկավարժները կարող են կրկին մրցույթին մասնակցել 5 տարի անց:

**Հավելված 3**

**«Կրթության և գիտության նախարարի  
2013 թ. դեկտեմբերի 5-ի  
N 1354-Ն հրամանի**

### **«Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի կարգ**

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպման և անցկացման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Մրցույթի նպատակն է՝ բացահայտել երեխաների կյանքի և առողջության պահպանման, նրանց ներդաշնակ ու համակողմանի զարգացման ուղղությամբ կրթադաստիարակչական աշխատանքում մեթոդական, գործնական խորը պատրաստվածություն ցուցաբերած, հմուտ, ստեղծագործական աշխատանք կատարող դաստիարակներին, ընդհանրացնել նրանց մանկավարժական և մասնագիտական առաջավոր փորձը, նպաստել հասարակության մեջ դաստիարակ-մանկավարժի հեղինակության բարձրացմանը:

3. Մրցույթը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

4. Մրցույթն անցկացվում է 3 փուլով՝

- 1) ներմանկապարտեզային,
- 2) մարզային (Երևանի քաղաքային),
- 3) հանրապետական:

5. Մրցույթի յուրաքանչյուր փուլը նախապատրաստելու և անցկացնելու համար ստեղծվում են ներմանկապարտեզային, մարզային (Երևանի քաղաքային) և հանրապետական գնահատող հանձնաժողովներ:

6. Մրցույթի 1-ին փուլն անցկացվում է նախադպրոցական հաստատություններում (այսուհետ՝ հաստատություն):

7. Մրցույթի 1-ին փուլի հանձնաժողովի կազմը (առնվազն 5 անդամ) հաստատում է հաստատության տնօրենը, որտեղ ընդգրկվում են տնօրենը, մեթոդիստը, դաստիարակներ, ծնողներ:

8. Հաստատության լավագույն դաստիարակն ընտրվում է այդ նպատակով հրավիրված նիստում, հանձնաժողովի անդամների փակ քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

9. Հաստատությունում լավագույնը ճանաչված դաստիարակը խրախուսվում է հաստատության տնօրինության կողմից և իրավունք է ստանում մասնակցելու Մրցույթի 2-րդ փուլին:

10. Մրցույթի 2-րդ փուլը սկսվում է ապրիլի 1-ին, արդյունքներն ամփոփվում են մինչև մայիսի 20-ը:

11. Մրցույթի 2-րդ փուլն անցկացնում են մարզային գնահատող հանձնաժողովները:

12. Մրցույթի 2-րդ փուլի գնահատող հանձնաժողովների կազմում (առնվազն 5 անդամ) ընդգրկվում են մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի), համայնքների ներկայացուցիչներ, ուսումնական հաստատությունների տնօրեններ: Մրցույթի 2-րդ փուլի հանձնաժողովների կազմում ընդգրկվում են նաև Նախարարության ներկայացուցիչներ:

13. Մրցույթի 2-րդ փուլի գնահատող հանձնաժողովի կազմը հաստատում է լիազոր մարմնի ղեկավարը:

14. Մրցույթի 2-րդ փուլի գնահատող հանձնաժողովի կազմը հաստատելու համար լիազոր մարմինը դիմում է Նախարարություն՝ թեկնածու ներկայացնելու համար:

15. Մրցույթի 2-րդ փուլին մասնակցելու համար հաստատության տնօրենը մարզային գնահատող հանձնաժողովին է ներկայացնում հաստատության գնահատող հանձնաժողովի որոշումը և երաշխավորագիր-բնութագիր՝ որը ներառում է տեղեկատվություն՝

1) դաստիարակի (երաժշտական դաստիարակի /ղեկավարի/) որակավորման, աշխատանքի ստաժի,

2) կոչումների, այդ թվում՝ պատվավոր (Ե՞րբ է ստացել, ո՞ւմ կողմից),

3) կազմակերպած կրթական միջոցառումների, գիտամեթոդական ամսագրերում հրատարակած հոդվածների պատճենները (առկայության դեպքում), հրատարակված ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնաօժանդակ ձեռնարկի հեղինակ կամ համահեղինակ լինելու հավաստումը (առկայության դեպքում), հանրապետական մրցութային միջոցառումներին մասնակցության,

4) համացանց-ռեսուրսային կայքում կամ հաստատության կայքում մեթոդական կամ այլ հեղինակային մշակումների վերաբերյալ:

16. Մրցույթի մարզային /Երևանի քաղաքային/ փուլն ընդգրկում է բաց պարապմունքի, գործունեության տարբեր ձևերի, զվարճալիքների կազմակերպումը (կրթական համալիր ծրագրով նախատեսված թեման ընտրում է մարզային գնահատող հանձնաժողովը):

17. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի որոշումը՝ լիազոր մարմինը մրցույթի 1-ին փուլի հաղթողի տվյալները մինչև տվյալ տարվա մայիսի 30-ը ներկայացնում է Նախարարություն՝ հանրապետական փուլին մասնակցելու համար:

18. Մրցույթի 3-րդ փուլի գնահատող հանձնաժողովի կազմն առաջադրում է Նախարարության հանրակրթության վարչությունը, հաստատում է ՀՀ կրթության և գիտության նախարարը:

19. Գնահատող հանձնաժողովում ընդգրկվում են Նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, կրթության ազգային ինստիտուտի մասնագետներ, կարող են ընդգրկվել գիտության և մշակույթի անվանի գործիչներ, հասարակական, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, նախորդ 3 տարիներին «Տարվա լավագույն դաստիարակ» ճանաչվածները, մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) և համայնքների կրթության կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներ:

20. Մրցույթի հանրապետական փուլն անցկացվում է կլոր սեղան-բանավեճի շրջանակներում՝ գնահատող հանձնաժողովի կողմից առաջադրված թեմայի շուրջ:

21. «Տարվա լավագույն դաստիարակ» ընտրվում է այդ նպատակով հրավիրված նիստում, փակ քվեարկությամբ՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

22. Հանրապետական փուլի մասնակից մյուս տնօրեններից ընտրվում են հաղթողներ նաև հետևյալ անվանակարգերում.

1) «Նորարարությունը մանկավարժության մեջ»

2) «Սիրտս նվիրում եմ երեխաներին»

3) «Երեխաների կյանքը հետաքրքիր անակնկալներով հագեցնելու համար»:

23. Մրցույթի հանրապետական փուլն ամփոփվում է մինչև սեպտեմբերի 25-ը:

24. «Տարվա լավագույն» դաստիարակը պարգևատրվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից:

25. Մրցույթի հանրապետական փուլի մասնակից բոլոր դաստիարակները պարգևատրվում են Նախարարության կողմից՝ «Ուսուցչի տոնի» նախօրեին:

26. Մրցույթի արդյունքում հաղթող «Տարվա լավագույն դաստիարակը» ուսումնական տարվա ընթացքում տվյալ ուսումնական հաստատությունում անցկացնում է բաց պարապմունքներ նախադպրոցական կրթության համակարգի և այլ հաստատությունների մանկավարժական կադրերի համար, մասնակցում է հաստատության ընթացիկ և հեռանկարային զարգացման ծրագրերի, ոլորտի ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկների փորձագիտական քննարկմանը, Նախարարության կողմից կազմակերպվող խորհրդաժողովներին, մանկավարժական մամուլում հրատարակում է հոդվածներ:

27. «Տարվա լավագույն դաստիարակ» ճանաչված, մրցույթի անվանակարգերում հաղթող մանկավարժները կարող են կրկին մրցույթին մասնակցել 5 տարի անց: